«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-527-07.03.2023-ԳԿ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է նախատեսել Հանրային հեռարձակողի խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) և Կարգավորող պետական մարմնի կազմերում յուրաքանչյուր սեռի առնվազն երկու ներկայացուցիչ ունենալու պահանջ, որի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունը սկզբունքային առարկություններ չունի:

Այդուհանդերձ հարկ ենք համարում նշել, որ նախագծով նախատեսված չէ կարգավորում, որով խորհրդի անդամի թեկնածուն հնարավորություն կունենա կողմնորոշվելու առաջադրվելու իրավունքի հարցում: Նշված խնդիրը կառաջանա նաև միաժամանակ մեկից ավելի հայտարարված թափուր տեղերի մրցույթի դեպքում, քանի որ առաջին մրցույթի արդյունքը հնարավոր է սահմանափակի հաջորդ մրցույթին արդեն իսկ դիմած թեկնածուների մասնակցելու իրավունքը:

Նույն դիտարկումը վերաբերում է նաև նախագծով առաջարկվող Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովին առնչվող համանման կարգավորմանը:

Ըստ այդմ, առաջարկում ենք նախագծով նախատեսել հստակ կարգավորումներ՝ նմանատիպ խնդիրներից խուսափելու համար:

Նախագծում պահպանված չեն օրենսդրական տեխնիկայի պահանջները, և առկա են խմբագրական բնույթի թերություններ: Այսպես՝

1. Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետի համաձայն նախատեսվում է 5-րդ մասում լրացնել նոր 8-րդ կետ, որի արդյունքում անհրաժեշտ է նաև 23-րդ հոդվածի 5-րդ մասի 7-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով:

2. Նախագծի 2-րդ հոդվածի համաձայն նախատեսվում է *Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասում «հեղինակավոր մասնագետ է» բառերից հետո լրացնել «ում*

ընտրության դեպքում չի խախտվի սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված յուրաքանչյուր սեռի ներկայացվածության պահանջը։» նախադասությունը։

Այս առումով հարկ ենք համարում նշել, որ Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասում խոսք չի գնում յուրաքանչյուր սեռի ներկայացվածության պահանջի վերաբերյալ, ուստի անհրաժեշտ է վերանայել սույն դրույթը։

3. Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին կետում *«սեռի ներկայացվածությամբ»* բառերն անհրաժեշտ է փոխարինել *«սեռային ներկայացվածությամբ»* բառերով՝ նկատի ունենալով Օրենքի դրույթի ձևակերպումը։

4. Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն նախատեսվում է *«ժամկետով» բառից հետո լրացնել «Կարգավորող պետական մարմնում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է պակաս լինի երկուսից։» նախադասությունը*։ Այս առումով հարկ ենք համարում նշել, որ կատարվող փոփոխության արդյունքում անհրաժեշտ է նաև «ժամկետով» բառից հետո «՝» կետադրական նշանը փոխարինել «։» կետադրական նշանով։